Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ <<ՀՀ Արարատի մարզի Եղեգնավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի աշխարհագրություն (11 դասաժամ) և բնագիտություն (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. **Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝** նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է՝ (Ձև 1),
2. **Փաստաթուղթ (դիպլոմ)** <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. **Անձնագրի պատճենը,**
4. **Ինքնակենսագրություն** (Ձև 4),
5. **Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները** (դրանց առկայության դեպքում),
6. **Մեկ լուսանկար՝** 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. **ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:**

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են մարտի 15-ից մինչև մարտի 28-ը ներառյալ, ամեն օր 10^{00}-ից 15^{00}-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա մարտի 30 -ին ժամը 14^{00}-ին, Արարատի մարզի Եղեգնավանի միջնակարգ դպրոցում. Հասցե գ. Եղեգնավան Խանջյան 10:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093)23-46-25